Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.71
S-80

19 NOV 2010

Լ. Ն. ՏՕԼՍՏՈՅ

ԱՍՏՈՒԾՈՒՆ ԹԷ ՄԱՄՈՆԱՅԻՆ

Թարգմ.

ՄԱՄԲՐԷ ՎԱՐԴԱՊԵՏ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1903

891.71
S-80

891.71
S-80

Լ. Ն. ՏՕԼՍՏՈՅ

ԱՍՏՈՒԾՈՒՆ ԹԷ ՄԱՄՈՆԱՅԻՆ

Թարգմ.

ՄԱՄԲՐԷ ՎԱՐԴԱՊԵՏ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1903

23 SEP 2013

14050

Дозволено цензурою 24 Апрѣля 1903 г. г. Тифлисъ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ... Гос. Библиотека ... Арм.ССР ... А. Мясникяна ... ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ

2176-91

ԱՍՏՈՒԾՈՒ՞Ն ԹԷ ՄԱՄՈՆԱՅԻՆ

Լ. Ն. Տօլստոյի

«Ոչ ոք ծառայ կարէ երկուց տերանց ծառայել. զի եթէ զմին ատիցէ, և զմիւսն սիրիցէ. կամ զմին մեծարիցէ, և զմիւսն արհամարհիցէ. ոչ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայի»:

(Ղուկ. ԺԶ. 16.)

«Որ ոչ ընդ իս է, հակառակ իմ է. և որ ոչ ժողովէ ընդ իս, ցրուէ»:

(Մատթ. ԺԲ. 30.)

Ամենաբերրի հողերի ահագին տարածութիւններ, որոնց արդիւնքով միլիոնաւոր աղքատ ընտանիքներ կարող էին կերակրուել, նուիրուած են ծխախոտի, խաղողի, գարու և գլխաւորապէս հաճարի ու գետնախնձորի մշակութեան, որոնցից մեծ մասամբ պատ-

բաստում են ոգելից խմիչքներ. գինի, գաբեջուր և, ամենից աւելի, օղի։

Միլիոնաւոր բանուորներ, որոնք կարող էին մարդկանց համար օգտակար գործեր կատարել, զբաղուած են վերոյիշեալ խմիչքների պատրաստութեամբ։ Հաշուած է, որ Անգլիայում բոլոր բանուորների մի տասներորդ մասը զբաղուած է օղու և գարեջրի պատրաստութեամբ։

Ի՞նչ հետեւանքներ են առաջանում ծխախոտի, գինու, օղու, գարեջրի պատրաստութիւնից ու գործածութիւնից։

Մի հին պատմութիւն կայ մեկ միայնակեացի մասին, որը իբր թէ վիճում է սատանայի հետ, թէ չի թողնիլ նորան իւր խուցը մտնի, իսկ եթէ թողնի, պատրաստ է կատարելու նորա առաջարկութիւնը։ Այն ժամանակ սատանան վիրաւորուած ագռաւի տեսք ընդունելով, արիւնոտ թեւը կախ ձգած, սկսում է թռչկոտել միայնակեացի խցի դրան մօտ։ Միայնակեացը խղճում է ագռաւին և իւր խուցը տանում։ Այդ կերպով սատանան մտնելով խուցը՝ առաջարկում է

միայնակեացին ընտրելու հետեւեալ երեք յանցանքներից մէկը. սպանութիւն, շնութիւն կամ արբեցութիւն։ Նա ընտրում է արբեցութիւնը՝ մտածելով թէ դորանով միայն ինքն իրան վնասած կը լինի։ Բայց երբ նա արբում է, բանականութիւնը կորցնելով, գնում է գիւղ և այնտեղ դայթակղուելով մի կնոջից՝ շնանում է և ապա ուզենալով պաշտպանուել տուն վերադարձող ամուսնու յարձակումից՝ սպանում է նորան։

Այսպէս են նկարագրւում արբեցութեան հետեւանքները հին առակի մէջ և իսկապէս հէնց այդպէս էլ են ոգելից խմիչքների գործածութեան հետեւանքները։ Շատ քիչ է պատահում, որ գողը կամ մարդասպանը չխմած դրութեամբ կատարէ իւր չարագործութիւնը։ Դատաստանատների գործերից երևում է, որ չարագործութիւնների հինը տասներորդ մասը կատարւում է արբած ժամանակ։ Թէ չարագործութիւնների մեծամասնութիւնը առաջանում է արբեցութիւնից, դորան ամենաակնյայտնի ապացոյց

կարող է լինել այն հանգամանքը, որ Ամերիկայի մի քանի նահանգներում, ուր խստաբարգելուած է գինու և ամեն տեսակ ոգելից խմիչքների մուտքն ու վաճառումը, չարագործութիւնները, համարեա թէ, վերջացած են. չկայ գողութիւն, աւազակութիւն, սպանութիւն և բանտերը մնում են դատարկ։ Այս է ոգելից խմիչքների գործածութեան մի հետևանքը։

Միւս հետևանքն այն վնասակար ազդեցութիւնն է. որ անում է ոգելից խմիչքների գործածութիւնը մարդկանց առողջութեան վերայ։ Բացի նրանից, որ ոգելից խմիչքների գործածութիւնից այնպիսի տանջող հիւանդութիւններ են առաջանում, որոնք միմիայն խմողներին են յատուկ և որոնցից շատ մարդիկ են մեռնում, նկատուած է նաև, որ խմող մարդիկ տկարանալով սովորական հիւանդութիւններով, աւելի դժուարութեամբ են առողջանում. այնպէս որ, կեանքը ապահովագրելու ժամանակ ապահովագրական ընկերութիւնները միշտ աւելի են գնահատում

չխմողների կեանքը քան՝ խմողներինը։

Այս է ոգելից խմիչքների գործածութեան միւս հետևանքը։

Երրորդ և ամենասարսափելի հետևանքն այն է, որ խմիչքը բթացնում է մարդկանց բանականութիւնն ու խիղճը. մարդիկ գինու և օղու գործածութիւնից հետզհետէ աւելի կոպտանում, յիմարանում և չարաչիրտ են դառնում։

Ոգելից խմիչքների գործածութիւնից ինչ օգուտ կայ։ Ոչինչ։

Գինու, օղու, գարեջրի պաշտպանները հաւատացնում էին առաջ, որ այդ խմիչքները առողջութիւն և ոյժ են տալիս մարդուն, տաքացնում և ուրախացնում են։ Բայց այժմ արդէն անվիճելի կերպով ապացուցուած է, որ այդ սխալ է։ Ոգելից խմիչքները առողջութիւնը աւելացնել չեն կարող, որովհետև իրենց մէջ զօրեղ թոյն՝ ալկոհոլ են պարունակում, իսկ թոյնի գործածութիւնը միմիայն վնաս կարող է բերել։

Թէ օղին ու գինին մարդուն ոյժ չեն տալիս, ապացուցուած է բազմիցս նաև հա-

մեմատելով ամիսների և տարիների ընթացքում խմող ու չխմող՝ հաւասարապէս լաւ վարպետների աշխատանքը. միշտ հետևանքը այն է եղել, որ չխմողը աշխատել է և՛ աւելի, և՛ լաւ, քան խմողը։ Այն զօրքերի մէջ, որոնց արշաւանքի ժամանակ օղի է տրւում, միշտ թոյլեր ու յետ մնացողներ աւելի են լինում, քան նրանց մէջ, որոնց օղի չի տրւում։

Ապացուցուած է նաև, որ գինին ու օղին չեն տաքացնում, որ դոցանից առաջացած տաքութիւնը երկար չի մնում և որ մարդ կարճ ժամանակ տաքանալուց յետոյ, աւելի է մրսում. այնպէս որ երկարատև ցրտին խմողը աւելի դժուար է դիմանում, քան չխմողը։ Ամեն տարի ցրտահար եղածներից շատերը սառչում են այն պատճառով, որ նախ իրանց տաքացնում են գինով կամ օղիով։

Թէ գինու և օղու առաջացրած ուրախութիւնը իսկական ուրախութիւն չէ, ապացուցանելու հարկ չկայ։ Ամեն ոք գիտէ, թէ ինչ է արբելուց առաջաց ուրախութիւնը։

Բաւական է միայն տեսնել թէ տօներին քաղաքներում գինեատների մէջ ինչ է կատարւում և գիւղերում ինչեր են անում տօներին, հարսանիքներին և կնունքներին։ Արբածութիւնից առաջաց ուրախութիւնը միշտ վերջանում է հայհոյանքով, կռուով, վիրաւորանքով, ամեն տեսակ չարագործութիւններով և մարդկային արժանապատուութեան ստորացմամբ։

Գինին ու օղին չեն տալիս մարդկանց առողջութիւն, այժ, տաքութիւն և ոչ էլ ուրախութիւն, այլ միմիայն վնաս։ Եւ ուրեմն պէտք էր սպասել, որ ամեն մի խելքը գլխին և բարի մարդ ոչ միայն ինքը հրաժարուէր ոգելից խմիչքներ գործածելուց և ուրիշներին հիւրասիրելուց, այլ և ամեն ջանք գործ դնէր վերջացնելու այս անպէտք և վնասակար թոյնի գործածութեան սովորութիւնը։

Բայց դժբաղդաբար այդպէս չէ լինում։ Մարդիկ այնպէս կապուած են հին սովորութեան հետ և այնքան դժուար են ձեռք վերցնում նրանցից, որ մեր ժամանակում

կան շատ և շատ բարի, լաւ և խելօք մարդիկ, որոնք ո՛չ միայն չեն հրաժարւում ոգելից խմիչքների գործածութիւնից և ուրիշներին հիւրասիրելուց, այլ և ամեն կերպ պաշտպանում են այս սովորութիւնը։

«Խոտելին գինին չէ, ասում են նրանք, այլ արբեցութիւնը։ Դաւիթ մարգարէն ասել է. «գինի ուրախ առնէ զմարդ». Քրիստոս Գալիլիայի Կանա քաղաքում օրհնեց գինին։ Եթէ չխմենք, կառավարութիւնը կը զրկուի իւր ամենագլխաւոր եկամուտից։ Առանց գինու չի կարելի տօներ կատարել, հարսանիք, կնունք անել։ Չի կարելի չխմել առ ու ծախի ժամանակ, թանկագին հիւր ընդունելիս»։ «Մեր ծանր աշխատանքը և կարիքը ստիպում է մեզ խմել», ասում է բանւոր մարդը։ «Եթէ մենք խմում ենք միմիայն պատահած ժամանակ և մեզ չենք կորցնում, դորանով մենք ոչ ոքի վնաս չենք տալիս», ասում են նիւթապէս ապահով մարդիկ։ «Խմելով մենք ոչ ոքի վնաս չենք տալիս, բացի մեզնից. իսկ եթէ մեզ վնաս ենք տալիս, այդ մեր գործն է. մենք չենք

ուզում ուրիշներին խրատել և ոչ էլ նրանցից խրատ լսել. մեզնով չի սկսուել և մեզնով էլ չի վերջանալ», ասում են թեթեւամիտ մարդիկ։

Այսպէս են ասում տարբեր կարողութեան և հասակի խմող մարդիկ, աշխատելով արդարացնել իրանց։ Բայց այս արդարացումները, որ դուցէ մի քանի տասնեակ տարիներ սորանից առաջ նշանակութիւն ունենային, այժմ բոլորովին անտեղի են։ Այդպէս կարելի էր ասել այն ժամանակ, երբ ամենքն էլ կարծում էին, թէ ոգելից խմիչքների գործածութիւնը մի անվնաս զուարճութիւն է։ Թէ այդ խմիչքները առողջութիւն և ոյժ են տալիս մարդուն. երբ դեռ չգիտէին, որ գինին ու օղին իրենց մէջ վնասակար թոյն են պարունակում։ Երբ դեռ մարդիկ անտեղեակ էին նաև արբեցութեան այն սոսկալի հետեւանքներին, որոնք այժմ ամենքին յայտնի են։

Այդպէս կարելի էր ասել այն ժամանակ, երբ դեռ չկային այն հարիւրաւոր և հազարաւոր մարդկային զոհերը, որոնք մեռ-

նում են անժամանակ և չարաչար տանջանք-
ներով, որովհետև սովորել են գործածել
ոգելից խմիչքներ և այլ ևս չեն կարողանում
յետ կանգնել այդ սովորութիւնից։ Հեշտ էր
ասելը, թէ գինին մի անվնաս զուարճու-
թիւն է, երբ դեռ մենք չէինք տեսնում
այն հարիւրաւոր և հազարաւոր քաղցած ու
տանջուած կանանց և երեխաներին, որոնք
տառապում են միմիայն այն պատճառով,
որ իրենց ամուսիններն ու հայրերը սովորել
են գինի և օղի խմել։ Հեշտ էր այդպէս
ասելը, քանի դեռ մենք չէինք տեսնում այն
հարիւրաւոր ու հազարաւոր չարագործնե-
րին, որոնք լցնում են բանտերը, աքսոր-
ւում, տաժանակիր աշխատանքի են դատա-
պարտւում և այն կորստի մատնուած կա-
նանց, որոնք այդ դրութեան մէջ են ընկել
միմիայն գինու և օղու շնորհիւ։ Կարելի էր
այդպէս ասել, քանի դեռ մենք չէինք իմա-
նում, թէ հարիւր հազարաւոր մարդիկ,
որոնք կարող էին ապրել յուրախութիւն
իրենց և ուրիշների, կորցնում են իրենց
ուժերը, խելքը և հոգին միմիայն այն պատ-

ճառով, որ ոգելից խմիչքներ գոյութիւն
ունին և նոքա իրենց տուել են խմիչքի։

Ուստի և մեր ժամանակում այլ ևս չի
կարելի ասել, թէ գինի և օղի խմել կամ
չխմելը մասնաւոր գործ է, թէ մենք ազատա-
կար չենք համարում խմիչքի չափաւոր գոր-
ծածութիւնը և չենք կամենում ուրիշին խրա-
տել կամ ուրիշներից խրատ լսել, թէ մեզ-
նով չի սկսուել, մեզնով էլ չի վերջանալ։ Այժմ
արդէն այդպէս չի կարելի ասել. խմիչք
գործածել կամ չգործածելը մեր ժամանա-
կում ընդհանուր գործ է և ոչ թէ մասնաւոր։

Այժմ բոլոր մարդիկ, ուզեն թէ չուզեն
իրենք՝ այդ մի և նոյն է, բաժանուած են
երկու բանակի. մի բանակ կռւում է խօսքով
և գործով ոգելից խմիչքների գործածու-
թեան դէմ՝ գինի և օղի չգործածելով և
ուրիշին չհիւրասիրելով. միւսը՝ քաջալերում
է խօսքով և, որ գլխաւորն է, գործով ոգե-
լից խմիչքների գործածութիւնը։ Այս կռիւը
գոյութիւն ունի այժմ բոլոր պետութիւն-
ների մէջ և արդէն քսան տարի է, որ ա-
ռանձին եռանդով մղւում է Ռուսաստա-

նում։ «Եթէ չիմանայիք, մեղք չէր համարուիլ ձեզ», ասում էր Քրիստոս։ Այժմ մենք գիտենք ինչ ենք անում և ում ենք ծառայում գինի և օղի գործածելով և ուրիշներին հիւրասիրելով. ապա ուրեմն, իմանալով գինու և օղու գործածութեան մեղք լինելը, եթէ մենք շարունակում ենք խմել և ուրիշներին հիւրասիրել, այլ ևս ոչ մի կերպ չենք կարող արդարանալ։

Եւ թող չասեն, թէ կան դէպքեր երբ չի կարելի չխմել և չհիւրասիրել, օր. տոներին, հարսանիքներին և ուրիշ նման դէպքերում, թէ այդպէս են անում ամենքը, թէ այդպէս են արել մեր հայրերն ու պապերը և հետևպէս մենք չենք կարող բացառութիւն կազմել ամենքից։ Այդ ճշմարիտ չէ. մեր պապերն ու հայրերը հրաժարուել են այն չար և վնասակար սովորութիւններից, որոնց վնասակարութիւնը ակներև է դարձել նոցա համար. մենք էլ նոյնպէս պարտաւոր ենք հրաժարուել այն չարիքից, որ ակներև է դարձել մեր ժամանակում։ Իսկ թէ մեր ժամանակում գինին և օղին դարձել են մի սոսկալի չարիք, այդ մասին ոչ մի կասկած չի կարող լինել։ Լաւ իմանալով, որ ոգելից խմիչքների գործածութիւնը հարիւր հազարաւոր մարդկանց կորստի մատնող մի չարիք է, ինչպէս կարող եմ տոներին, կնունքի կամ հարսանիքի ժամանակ ինձ մօտ հաւաքուած բարեկամներիս հիւրասիրել այդ չարիքով։

Ամեն բան միշտ այնպէս չի եղել, ինչպէս այժմ, այլ ամեն ինչ փոխուել է վաղից դէպի լաւը և փոխուել է ոչ ինքնիրեն, այլ այն մարդկանց շնորհիւ, որոնք հետևել են իրենց բանականութեան պահանջներին ու խղճի ձայնին։ Եւ այժմ մեր բանականութիւնն ու խիղճը յամառ կերպով պահանջում են մեզնից, որ թողնենք գինի և օղի խմելու և ուրիշներին հիւրասիրելու վնասակար սովորութիւնը։

Սովորաբար դատապարտութեան և արհամարհանքի արժանի են համարում այն արբեցողներին, որոնք գինետներում և ճաշարաններում խմում են խելքը կորցնելու չափ և արդէն այնպէս են սովորել գինու և

օղու, որ յետ կանգնել չեն կարողանում և բոլոր ունեցածը խմիչքի են տալիս։ Իսկ այն մարդիկ, որոնք խմում են տանը ամեն օր չափաւոր կերպով և հիւրասիրում են գինով իրենց հիւրերին ամեն մի ընդունուած դէպքում, համարւում են վատ բան չանող, յարգելի ու լաւ մարդիկ։ Այն ինչ հէնց այդ տեսակ մարդիկ արբեցողներից աւելի են արժանի դատապարտութեան։

Արբեցողները այդ վիճակին են հասել միմիայն այն պատճառով, որ չհարբողները, իրենց չվնասելով, սովորեցրել են նրանց խմել, դայթակղեցրել են նրանց իրենց օրինակով։ Արբեցողները երբէք խմող չէին դառնալ, եթէ չտեսնէին ամենքից յարգուած, պատուաւոր մարդկանց գինի և օղի խմելիս և ուրիշներին հիւրասիրելիս։ Դեռևս երբէք գինի չխմած պատանին նորա համն ու ազդեցութիւնը խմանում է տներին, հարսանիքներին այդ ամենքից յարգուած, թէև չհարբող, բայց որոշ դէպքերում խմող և ուրիշներին հիւրասիրող, մարդկանց մօտ։

Ապա ուրեմն, ով որ խմում է գինի, թէպէտ և չափաւոր, և ընդունուած դէպքերում ուրիշներին հիւրասիրում, մեծ մեղք է գործում։ Դրանով նա դայթակղեցնում է այնպիսիներին, որոնց իրաւունք չունի դայթակղեցնելու, որոնց համար ասուած է. «վայ նրան, ով կդայթակղեցնէ այս փոքրիկներից մէկին»։

Ասում են. մեղնով չի սկսուել, մեղնով էլ չի վերջանալ։ Ո՛չ, մեղնով էլ կը վերջանայ, եթէ միայն հասկանանք, որ ամեն մէկիս համար գինի խմել կամ չխմելը մի անտարբեր գործ չէ, որ ամեն անգամ մեր գնած մի չիշ՝ կամ խմած մի բաժակ գինով մենք ծառայում ենք այն զարհուրելի սատանայական գործին, որի շնորհիւ փչանում են մարդկային ամենալաւ ուժերը։ Իսկ ընդհակառակը, հեռու պահելով մեզ գինուց և տոնի, հարսանիքի, կնունքի ժամանակ գինի գործածելու անմիտ սովորութիւնից, մի շատ կարևոր գործ, հոգու, Աստուծոյ գործ կատարած կը լինինք։ Միայն թէ հասկանանք այս ամենը և մեղնով էլ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

կը վերջանայ արբեցողութիւնը։

Ուստի և, ով էլ որ լինիս, ընթերցող, կեանքի համար նոր պատրաստուող պատանի թէ արդէն քեզ համար կեանք ստեղծած հասուն մարդ, տանտէր թէ տանտիկին, կամ արդէն տարիքն առած ծերունի, հարուստ թէ աղքատ, յայտնի թէ անյայտ ոք, ով էլ որ լինիս, չես կարող այլևս կանգնել երկու բանակի մէջտեղում, դու անպատճառ պէտք է ընտրես երկուսից մէկը. կռուել արբեցութեան դէմ կամ պաշտպանել նորան, ծառայել Աստուծուն կամ մամոնային։

Եթէ դեռ գինու համը չառած և նորա թոյնով չթունաւորուած մի պատանի ես, իմացիր գնահատել քո անարատ և գայթակղութիւնից ազատ լինելդ։ Եթէ մի անգամ տեղի տաս գայթակղութեան, այնուհետև դժուար կը լինի ազատուել նրանից։ Մի հաւատար թէ գինին կաւելացնի ուրախութիւնդ։ Քո հասակին յատուկ է իսկական, ճշմարիտ ուրախութիւն, իսկ գինին իսկական անմեղ ուրախութիւնդ կը փոխարինէ

խմողի անմիտ և անմաքուր ուրախութեամբ։ Զգուշացիր գինուց գլխաւորապէս այն պատճառով, որ քո հասակում դժուար է դիմադրել ընդհանրապէս բոլոր գայթակղութիւններին, իսկ գինին կը թուլացնէ քո մէջ այդ հասակում ամենահարկաւոր բանը՝ բանականութեան ոյժը, որ դիմադրում է գայթակղութեանց։ Արբելով դու այնպիսի բան կանես, ինչ որ, չհարբած ժամանակ, մտքովդ անգամ չէիր անցկացնել։ Ինչքա՞ն ուրեմն քեզ պէտք է ենթարկես այդպիսի մի սարսափելի վտանգի։

Եթէ հասած մարդ ես և նոր ես սկսում ոգելից խմիչքներ գործածել կամ արդէն սովորութիւն ես դարձրել քեզ համար, քանի դեռ ժամանակ կայ, շտապիր շուտով ձեռք վերցնելու նրանից, թէ չէ, մէկ էլ կը տեսնես, որ այդ սովորութիւնը արդէն յաղթել է քեզ և այն ժամանակ դու էլ կը դառնաս անդարձ կորած արբեցողներից մէկը։ Նոքա բոլորն էլ քեզ պէս են սկսել։ Եթէ դու մինչև անգամ կարողանայիր ամբողջ կեանքիդ ընթացքում ոգելից խմիչք-

ների չափաւոր գործածութեան սահմանից դուրս չգալ և արբեցող չդառնալ այնուամենայնիւ շարունակելով գինի խմել և ուրիշներին հիւրասիրել գուցէ դրանով արբեցող դարձնես փոքր եղբօրդ, կնոջդ, երեխաներիդ, որոնք կարող են քո չափ այժ չունենալ միշտ չափաւորութեան սահմանի մէջ մնալու համար։ Եւ որ գլխաւորն է, լաւ հասկացիր, որ քեզ վերայ է ընկնում, իբրև հասունացած մարդու, քո ընտանիքի անդամներին առաջնորդելով պարտականութիւնը։ Ապա ուրեմն, եթէ դու գիտես, որ գինին ոչ մի օգուտ չի բերում և մարդկանց մեծ վնաս է հասցնում, ուստի և ոչ միայն չպէտք է սարիօրէն կրկնես այն, ինչ որ արել են նախորդներդ՝ գինի առնել, խմել և ուրիշներին հիւրասիրել, այլ ընդհակառակը պարտաւոր ես փոխարինելու այդ վնասակար սովորութիւնը մի ուրիշ լաւ սովորութեամբ։

Մի վախեցիր, ասներին հարսանիքներին, կնունքներին գինի գործածելու սովորութեան վերացումը շատ էլ չի վերաւորիլ

մարդկանց։ Շատ տեղերում արդէն սկսել են այդպէս անել, գինով հիւրասիրելը փոխարինելով անուշ ուտելիքներով և անվնաս (ոչ ոգելից) խմիչքներով. և մարդիկ, այն էլ ամենից յիմարները, միմիայն սկզբներում տարօրինակ են համարում այդ, բայց շուտով սովորում են և հաւանութիւն տալիս։

Եթէ ձեր մարդիս, այն հասակում, երբ այսօր կամ վաղը հարսն պէտք է տաս Աստուծուն թէ լինի՞ էր ծառայել Նորան, և դու փոխանակ երիտասարդ, անփորձ մարդկանց յետ կանչեցնելու գինուց, որի վնասը կեանքիդ ընթացքում անշուշտ տեսած կը լինես, դայթակղեցնես մերձաւորներիդ քո օրինակով, գինի խմելով և ուրիշներին հիւրասիրելով, մեծ մեղք գործած կը լինես։

«Վայ աշխարհին դայթակղութեանց երեսից, դայթակղութիւնները պէտք է գան. բայց վայ այն մարդուն՝ ում ձեռքով կը գայ դայթակղութիւնը»։

Միայն թէ մենք լաւ հասկանայինք, որ գինու գործածութեան խնդրում միջին տեղ

չկայ, և ուզենք-չուզենք պէտք է ընտրենք երկուսից մէկը. Ծառայել Աստուծուն կամ մամոնային։

«Ով ինձ հետ չէ, հակառակ է ինձ. և ով չի ժողովում ինձ հետ, ցրւում է»։ (Մատթ. ԺԲ. 30)

24
1

Земаљска библиотека № 1 Сарајево
Z. U. B. Z.
ШКОЛА И СТУДИЈА